

ԻՐԱՄԻՆԵՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԾԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլիարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (երկու քիւր մեկ
ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Անկիւղայի » 2.60 տոլ. վեցամս 1.50

ԿԱՆՈՒԻ ՎՃԱՐԵԼԻ

Համակ դրամ եւայլն ղրկել հետեւեալ հասցեով

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՄԻՆԵՔ» ԼՐԱԳՐՈՅ. — ՎՍ ԹԵԱ (Պոլիարիա)

Редакция на ВѢСТНИКЪ

„И равункъ“

ВАРНА (България)

Rédaction du journal

„I r a v o u n k“

V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
եւ չեն ղրկուիր եւ յարմար դատաւո-
նեւր միայն կը հրատարակուին աւ-
րոյշովի կամ մասամբ:
Խանութեան տոյր 20 սանթիմ. երե-
սեմ աւելի անգամներու համար 20 0/0
զեղչ կը շինի:

ԹՈՒՐԲ ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԸ

Մեր նախորդ թուով թուրքե-
րէն բաժնին մէջ հրատարակե-
ցինք Տաճար Մահմուտ փաշայի
նամակը, ուղղութեամբ Մէլլիքի
հետեւին Ահմէտ Բիգլապէյի, Ալի
նամակի եզրակացութիւնը սա էր
«մենք օսմանցիքս օտար տէ-
րութիւններու միջամտութեան վրայ
պէտք չէ յայտնել. մեր յայտը
մեր վրայ կեդրոնացած է. մենք
զինքն պիտի ազատենք այս գիշը-
ղակ կացութիւնէն. ուստի ձեռք
ձեռքի տանք ու աշխատենք»:

Փաշան եթէ անկեղծ համազու-
մով ու անձնուիրաբար գործելու
առաջադրութեամբ կը շնչէ աշխ-
խօսքերը, կրնանք ըսել թէ,
թուրք հայրենասէրներուն առջեւ
նոր ծրագիր մըն է որ կը պար-
զուի:

Այո՛, Մահմուտ փաշան՝ օտա-
րի վրայ յայտնելով, մենք
մեզ օգնենք կրտսէ. մինչդեռ մին-
չեւ ցարդ ժէօն. թուրքերու շար-
ժումին ու գործունէութեան մէջ
այդ սկզբունքը չէ յարգուած.
այնպէս որ 6—7 տարիներէ ի
վեր վերակազմուած այդ մարմի-
նը որ մեր յեղափոխական կու-
սակցութիւններէն շատ աւելի մի-
ջոյններ եւ դիրքութիւններ ունի
երկրին մէջ մեծ ուժ մը գոյացնե-
լու եւ գործնական ու վճարական
քայլեր առնելու, չէ կարողացած
բան մը ընել եւ գոնէ հայ-
րենիքին մէջ իր գոյութիւնը հա-
սարակութեան ամեն խառնուրդ
զգացնել: Ժէօն. թուրքերուն էն
հայրենասէրին եւ էն քաջասիրտին
ամենայնապէս գործը եղած է
հայրենիքէն փախչելու եւ արտա-
սահմանի մէջ լիբերալ մը կամ մէկ
բանի յօգուածներ հրատարակել,
Սուլթան Համիտի անձին եւ ստեղ-
ծած ներկայ յուսի վարչութեան
դէմ, փախստական ժէօն. թուրքե-
րու արտասահմանի մէջ գրչի ծա-
րով ունեցած գործունէութիւնը
իրենց անձին չեղելու ըլլալէ ա-
ն. դին ոչ մի արժէք եւ օգուտ չի
ներկայացներ, քանի որ ուրոյա-
պէս զիտենք թէ թուրքիոյ մէջ

իսլամ տարրը բնաւին անտեղիակ
է արտասահմանի անցած դարձա-
ծէն եւ հրատարակութիւններէն:

Մենք քանի քանի առիթներ
բով անձամբ խօսած ու բացատ-
րած ենք շատ մը թուրք հայրե-
նասէրներու թէ՛ Համիտական կոր-
ծանաւորութիւնն ազատելու հա-
մար նախ թուրք տարրը արթն-
ցնել պէտք է. ասոր համար ալ
արտասահմանեան հրատարակու-
թիւնները բնաւ արժէք չեն կըր-
նար ունենալ քանի որ անոնց
թուրքիա մօտքը արդիւրեւ է.
ուստի փոխանակ 20 հատ հակա-
համիտական թերթեր հրատարա-
կելու արտասահմանի մէջ, կը բա-
ւէ ի Պօլիս լաւ կազմակերպուած
ցոյց մը ընել, որուն համար 8—10
թուրքեր հայրենեաց սիրոյն հա-
մար ի հարկին զոհուիլ աչքերին
առնելու են: Գորչափ երիտասարդ
թուրքերու մէջ այդ անձնուիրու-
թիւնը ունեցող կը պակսի, այդ
ազգը լաւագոյն ուժի մի մը ան-
ընդունակ եւ անախտան նկատել
շատ տրամաբանական է. որովհե-
տեւ պատմութիւնը ցոյց կուտայ
թէ, ամեն մի ազգ ինքնօգնու-
թեամբ ու ներքին յեղափոխու-
թեամբ ինքզինքը փրկած է բռն-
նակալներու լուծէն: Թուրք հայ-
րենակիցներ, դուք ալ նոյնը ընե-
լու էք ինչպէս ըրին Ֆրանսացիք.
Անգլիացիք, Իտալացիք եւ ուրիշ-
ներ:

Բայց ցաւալին այն է որ, ե-
րիտասարդ թուրքերու առջեւ
բազմիցս կրկնուած այս խօսքե-
րուն լուծութիւնէ զատ պատասխան
չի կրցնիք ընդունիլ: Քանի մը
տարի առաջ ժէօն. թուրքերու
պետ հռչակուող Մուրատ պէյ
իր Սիգսմունդ մէջ բացէ ի բաց
յայտարարեց թէ «համիտական
ներկայ վարչութեան դէմ մեր
գործածելիք զէնքը լիզու եւ գրիչ
է միայն»: Մուրատի այս յայ-
տարարութիւնը ժէօն. թուրքերու
համար բացարձակ դատապարտու-
թիւն մ'էր իբր ոչ-գաղափարի մար-
դիկ, այլ պարզ բախտախնդիր-
ներ, ինչպէս որ Մուրատ եւ ու-
րիշներ այս բանը անձամբ ցոյց
տուին իրենց Պօլիս վերադարձով:
Բայց անդին կար ու կը մնար

Մէլլիքիքի խմբագրապետ Ահմէտ
Բիգլան որ մինչեւ այսօր գոնէ
գրչի պայքար կը մղէ ամենայն
հաստատման թեմամբ, ե Օսման-
լիք խմբակը՝ որ նոյնը կընէ:

Սակայն ինչպէս ըսինք, ար-
տասահմանի մէջ գրչի ծայրով
մղուած պայքարը թուրքիոյ իս-
լամ տարրը իր խոր քունէն չէ
կարող սթափեցնել եւ ոչ ալ հա-
միտական ուժի մի մը տապալումը
փութացնող ու եւ օգուտ յառաջ
բերել: Կոնքը հոն, հայրենիքին
մէջ պէտք է մղել, եւ ասոր հա-
մար անձնագոհ հայրենասէրներու
խմբակի մը կազմութիւնը անհրա-
ժեշտ է: Տաճար Մահմուտ փա-
շա՝ որ իր ձեռքը կերկնցնէ Ահ-
մէտ Բիգլան եւ ուրիշ ժէօն. թու-
րքերու, պէտք է սա համազումը
անոնց ներշնչէ թէ Օսմանեան
կայսրութիւնը իր մօտալուտ ան-
կումէն փրկելու էն հաւանական
միջոցը բուն երկրին մէջ գործ-
նական յեղափոխութիւն մը յա-
րուցանելն է. եթէ առայժմ ուրիշ
տեղեր չեն կրնար, գոնէ Պօլսոյ
մէջ այդ ընելու են, որուն համար
եթէ տարբ քսան անձնուիրներ ալ
զոհ երթան, դա կը բաւէ Սուլ-
թանը սարսափեցնելու եւ թուրք
տարրը սթափեցնելու. որով առա-
ջին զլխաւոր քայլը առած կըլլան
թուրք հայրենասէրները: Մինչ
դեռ իրենց մինչեւ ցարդ ունե-
ցած գործունէութիւնը ապարդիւն
ըլլալով հանդերձ, հարիւրաւոր ե-
րիտասարդներու անձայն անշուշտ
կորստեան պատճառ եղաւ: Այդ
կորստուողներուն մէկ քառորդը
կրնար առաջին մեծ քայլը առնել
եթէ երիտասարդ թուրքը փափա-
քին հետ միացնէր անձնուրաց
քաջասիրտութիւնն ալ:

Թուրք հայրենասէրներ, ցորչափ
կ'պակսին ձեռք մէջ անձնուրացներ,
այսօր ստրկութեան, իսկ վաղը
ազգագրի կորուստի դատապար-
տուած էք: Իսկ արտասահման-
եան կազմակերպութիւնը միշտ կ'ուզեց
կը մնան. միայն դիտարկները
կը փոխուին, հինիքը դատաւիք
կըլլան եւ նորերը իրենց աչքը
Սուլթանի պնակին յառած կ'ապա-
սեն պատեհ առթի մը երթալ զայն
լիզելու համար:

—)o(—

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիկ, 9 փետրուար

ՀՐԱՆԱ ԳԵՐՄԱՆՈՅ ԵՒ ԱՆԳԼՈՅ ՄԱՅԻ

Քանի մը օրերէ ի վեր Գերմա-
նական մամուլը նոր դիրք մը բռ-
նած է Ֆրանսայի նկատմամբ. եւ
որովհետեւ այդ շարժումը տեղի
ունեցաւ մանաւանդ պաշտօնական
գոյն ունեցող լիբերալներէ, պէտք է
մեր ուշադրութիւնը գրաւէ:

Գիտենք թէ Գերմանիոյ մէջ,
ընդհանրապէս ժողովրդական հա-
մակրութիւնն դէպի Պօլսնեւրու
կողմը կը հակի՝ ընդդէմ Անգլիոյ
ասոր ապացոյց Բրուսիոյ, Սաք-
սոնիոյ Պաւլիոյ մէջ եւ հոնոսի
կղերքներն տեղի ունեցած ցոյցե-
րն:

Ֆրանսական հասարակական կար-
ծիքն ալ ինչպստ Պօլսնեւրուն լի-
նելով, այդտեղ նշմարելի էր եթէ
ոչ մերձեցում մը գէթ մտածումի
եւ զգացումի նոյնութիւն մը: Գեր-
ման կառավարութիւնը այդ բա-
նին մէջ անպատեհութիւններ տես-
նելով, հրամաններ տուած է այդ
հոսանքին դէմը առնելու. կիսա-
պաշտօնական թերթերը այդ բա-
նը բացարձակապէս կը խոստովա-
նին, ըսելով որ Գերմանիա պարզ
հանդիսատես պէտք է մնայ Ալ-
բիկեան պատերազմին առանց ու
է կերպով միջամտելու: Բայց ինչ
որ կը զարմացնէ բացատրութիւն-
ներն են. իբրեւ թէ Ֆրանսա կու-
զէ Գերմանիան իր ետեւէն քաշե-
լով Անգլիոյ հետ գծաքիչ եւ
անոր խոշոր ձանձրոյթներ պատ-
ճառել:

Մենք արդէն բաւական հեռի
ենք այդ ժամանակէն յորում կայ-
սրը Ֆրիւկէր նախագահին իր
անուանի հեռագիրը ուղարկեց,
որով Անգլիան զարմացած՝ հա-
կցաւ թէ պէտք է վիքթորիայի
թուր լաւագոյն զգացմանց բերել
եւ տեղի ունեցաւ Դաշնագրութիւն
մը (Գերմանիոյ եւ Անգլիոյ) որուն
վրայ երկար ժամանակ խօսուե-
ցաւ: Կայելի է ենթադրել թէ
կիյնումի նոր ցոյց տուած դիրքն
ազգուած լինի այդ դաշնագրու-
թեան հարուածներէն, վասն զի
կրնար լինի որ Զէմպրէն որ հա-
բերող մինիստրի մը յատկութիւն.

ներն ընտել չունին, ելլէր Երիւթի մի քովին տակ զնէր այդ գաշնազը-
րութիւնն և . . . ամեն բան աւ-
րէր:

Հաւանական է ուրեմն որ այս
բանը Գերմանիոյ քաղաքականու-
թեան փոխութեան մէկ պատճառն
լինի:

Ուրեմն Ֆրանսայի դրութիւնը
ողբալի է պիտի ըսեն ոմանք: Ո՛չ
երբէք, երկար ժամանակէ ի վեր
Ֆրանսայի դիրքն այսքան նախան-
ձելի չէր եղած. այսօր Ֆրանսան
կշիռի մը կը նմանի որուն մէկ կող-
մն Գերմանիոյ բեռը կը գտնուի,
իսկ միւս կողմն Անգղիացիինը, եւ
որովհետեւ Ֆրանսա իր հոտին ու-
նի Ֆլանդր-Ռոս գաշնակցութեան
յենարանը, նա կրնայ սպասել,
պայմանաւ սակայն որ այս սպա-
սումը անպտուղ մնաքման չփոխ-
ուի, այլ ընդհակառակը կարելի
եղածին չափ օգտակար կերպով
գործածուի ի պահանջի հարկին:

Այս միջոցիւ Ճարմանի տէրու-
թիւնը մեծ աշխոյժով կը զբաղի
զանազան առաջդիմական խնդիր-
ներով, որոց գլխաւորներն են հի-
սեւեալներն:

Երկար ժամանակ Պաւտոսյա-
կանութիւնը Ճարմանի միակ կրօն-
քն էր, ուստի և ազգային հաւատ-
քն էր. բայց այսօր քրիստոնէու-
թիւնը տարածուած լինելով Ճա-
րմանի մէջ օրէ օր աւելի կը տարա-
ծուի, ուստի կառավարութիւնը
ստիպուած կը համարի ինքզինք
նոր օրէնքներ հրատարակելու կը-
րօնքներու մասին:

Երկրորդ խնդիրն է երեսփոխան
ներու ընտրութեան խնդիրը որ
մինչեւ օրս զանազան պակասու-
թիւններ ուստի և անպատահելի
ներ ունէր: Կռակներ բարեփոխել:

Ուրիշ խնդիր մը որ ոչ նուազ
հետաքրքրական և շահեկան է քան
առաջինները և որով պիտի ըզ-
րազի ճարմանական խօսարարը.
ճարմանիկներ խնդիրն է, որոնք
շատ գէշ գրութեան մէջն են, վա-
սնդի աւատական ժամանակներէ
ի վեր անոնք գոյութիւն ունին և
բնու չեն վերանորոգուած:

Բայց բարեփոխմանց ամենակա-
րիւոր կէտերն են երկրորդ կարգի
ուսմանց և ազգային այրուբէնի
փոփոխութիւնն:

Ճարմանցիք շահագրգռութեամբ
կը հետեւին Եւրոպայի և մանա-
ւանդ Ֆրանսայի մէջ երկրորդ կար-
գի ուսմանց համար առաջարկուած
օրէնքներուն: Ճարմանցիք ալ կը
ուզեն բարեփոխել իրենց ուսմանց
ձեւն և ժամանակ շահել տալ ի-
րենց ուսանողներուն:

Այսօրէն փոփոխման խնդիրը
անսորակոյս ամենէն յանգուզն
է, այդ ծրագրին նպատակն է
անհետացնել չինական զբոս զորս
կը դարձած են Ճարմանցիք էրդ
կամ Ըրդ դարէն ը վեր, Բուն
ճարման այրուբէնի զբոս շատ նը-

մանութիւն ունին Լատինական գը-
րերուն: Բայց կըսեն թէ այս
վերջին բարեփոխութիւնը շատ
գեթուար և շատ երկար պիտի լինի:

ԵՐԲ ՊԻՏԻ ՍԿՍԻ ՅՈՒՅԱՆԱՆԴԵՍԸ

Ե՛րբ պիտի սկսի ցուցահանդէ-
սը: Ահաւաստիկ հարցում մը որուն
պատասխանելը բաւական գեթուար
լինի:

Ոմանք ըսին թէ ապրիլ 15ին
պիտի բացուի, ուրիշներ մայիսի
1ին: Բայց ասոնք բոլորն ալ են-
թադրութիւններ են: Նախ ըսնաք
թէ անկարելի բան է որ Յուլի-
անդէսի բացումն տեղի ունենայ
ապրիլի կէսին, վասնզի դեռ շատ
և շատ բան կայ պատրաստելիք.
իսկ թէ արդեօք մայիսի մէկին
այդ ալ մեկ տարակուսելի կը
թուի, ցուցահանդէսի պատրաս-
տութիւններն այցելելէս յետոյ:
Մեզ այնպէս կը թուի թէ Յու-
լիանդէսի բացումը հազիւ հազ
տեղի կ'ունենայ մայիսի երկրորդ
կէսին կամ գոցէ և յունիսի ըս-
կիւրներուն:

Ա. Սեւի եւ Մ. Դաւիթ-Ռեկ

1800-1900

Պ.
ՏՐԱՆՍԱ

(Շարունակ. Լախորդ քուէն)

Մարտիկոյ յաղթութիւնն և Լիւն-
դիի զաշնադրէն յետոյ, Պոնաթարթ
Անգղիոյ հետ ալ համաձայնութեան մը
յանգեցաւ, և Ամիէնի զաշնադրու-
թեամբ, Լոնտոնի զաշնադրէն կը խոստա-
նար Մայիսի 30ին և Յունիական կըզ-
դինէրն ալ (Միջերկրականի մէջ, ոչ ոնք
վերջէն Յունաց արուեցան) Սուլթա-
նին զարմնել:

Գաղղիոյ և Անգղիոյ այս համաձայ-
նութիւնը ամփամեայ եղաւ. Պոնա-
թարթ վստած էր թէ Անգղիոյ կառա-
վարութիւնը չպիտի յարգէ իր խոստո-
մը բայց հարկադրուած էր այդ ձեւով
դոնէ ամփամեայէս զարդիցնել անըն-
հատ պատերազմները, որոնք Պոնաթարթ
ամեն կերպով յոգեցուցած էին և
ժողովուրդը խաղաղութեան կը ցան-
կար:

Այս զաշնադրութիւնը զաղղիոյ կառավա-
րութեան ուղղակի պաշտպանութեան
ներքեւ կ'իյնային, ոչ միայն Իտա-
լիան այլեւ Հոլանտան ու Զուիցերլանդ:

Միեւնոյն ժամանակ Պոնաթարթ
Սան-Տոմիլիկ զաղղիականի մէջ բա-
ւական ծանր հանգամանք ունեցող խը-
ռովութիւն մը ծագած էր իշխող տար-
րին զէմ գերութեան բարձրանը հա-
մար. այդ ապստամբութիւնը և շատ
արդարացի բողոքի ձայնը խեղդելու
համար Գաղղիացիք այնպիսի միջոցներ
ձեռք առին, որոնք բոլորովին հակա-
ռակ էին իրենց՝ բանապետութեան դէմ
բռն առաջ մղած պայքարին:

Օրումն աստղը Պոնաթարթին էր,
ոչ միայն Պոնաթարթ, այլ Եւրոպայի ալ
Նաթուլէնի ազգած հիւսցումը տաքա-
րին Գաղղիացիին համար պաշտամուն-
քի աստիճանին հասաւ և իր հիւպա-
ստս իր գործադիր իշխանութեան 10
տարուան պայմանաւոր, ցկեանս ու-
րջուեցաւ:

Երկի բանապետութեան դէմ, եզ-
բայրութեան, հաւասարութեան և ա-

զատութեան սուր կռիւ մղող Գաղ-
ղիացիին, այսօր ինքը կըստեղծէր ինք-
նակալութիւնը:

Պոնաթարթ միշտ ցարդ մեղ կերե-
նայ յանդուգն պատերազմող մը և առ-
պանդաւոր ու ճարտար ռազմագէտ մը.
Իսկ հիմայ պիտի տեսնենք զինքը բա-
րենորդիչ վաշնագէտ և զիւսնագէտ:
Նաթուլէն, ինչպէս մեր նախորդ գը-
րութեան մէջ ըսած ենք, երկրին նը-
շանաւոր ռազմադէմները իր հետ և աղ-
ղիցութեան ներքեւ ունէր: Այդ մեծ
ուժերը հիւսնալի ճարտարութեամբ գոր-
ծածեց ի նպաստ երկրին եւ իր փառ-
քին:

Նախ հեղինակուեցաւ Ֆրանսական նոր
օրէնքը որ Նաթուլէնեան օրէնք (Գոս
Նաթուլէն) անուանով գործադրութեան
զրուեցաւ Պոնաթարթի մէջ և քաղաքա-
կիրթ երկրներէն ոմանք այդ օրէնքը
նոյնութեամբ, իսկ ոմանք ալ սկզբուն-
քով ընդունեցին: Յետոյ Պոնաթարթ
Պոնաթարթ հաստատուեցաւ և երկրին ե-
լեմական կացութեան զարգացմանը
և կանոնաւորմանը ձեռնարկեց:

Իսկ ամենէն աւելի իր մասնաւոր ու
շագրութեան աստիճան եղաւ կրթա-
կան խնդիրը, որուն շատ մեծ մղում
և զարկ տուաւ Նաթուլէն: Մասնաւոր
խնամքով հսկողութեան տակ առնուե-
ցան Մեծ Վարժարանները, մանաւանդ
Լազարուսեան (Էթոլ Բոլիթէթիք)
Համալսարանը (Բոլիթէթիք), ու
յոնց առատ նպաստներ յատկացուե-
ցան գանձին: Նաթուլէն կրթական զար-
ծին մէջ, լայն տեղ մը տուած էր աղ-
ջկանց դաստիարակութեան:

Աղջկանց դաստիարակութեան նը-
կատմամբ Պոնաթարթի մէկ նշանաւոր
խօսքը աւելորդ չեմ տեսնիր յիշատա-
կել թէ «Մեծ Պոնաթարթ Լաւ Ֆրան-
սացիներով կրնայ ըլլալ, իսկ Լաւ Ֆը-
րանսացիներն ալ միայն աղէկ դաստի-
արակուած մարդերով»:

Յեղափոխութեան ատեն Գաղղիա-
կան Ակադեմիոյ գոյութենէ զաղրած
էր. Նաթուլէն վերանստատեց զայն
որ իր իշխանութեան ամբողջ տեւո-
ղութեանը միջոցին զինքը խնկարկելով
զբաղեցաւ:

Շնորհիւ Գաղղիոյ և Պոնաթարթի
ստացած միջազգային մեծ հեղինակու-
թեան ֆրանսիէնը տիեզերական լե-
զու ըր դարձաւ:

Յեղափոխութեան ատեն Պոնաթարթ
յի մէջ եկեղեցիին Հոռոմի հետ ունե-
ցած բարոյական կապը խզուած էր
և պետութեանն ալ անջա-
տուած: Նաթուլէն Պոնաթարթ հետ կըն-
քած մասնաւոր զաշնադրով մը (Գոն-
թորաթ) եկեղեցին Վատիկանի բա-
րոյական գերագոյն իրաւասութեանը
ենթարկեց և միեւնոյն ատեն ալ պե-
տութեան միացուց: Այսպէսով Պոնա-
թարթ մէկ կողմէն բարոյապէս ամենա-
հզօր Քահանայապետին բարեկամութիւ-
նը կը շահէր և միւս կողմէն իրեն կը
կապէր երկրին կղերականութիւնը, ու
որուն ազդեցութիւնն ու հեղինակու-
թիւնը անորով էր հասարակ ժողովուր-
դին վրայ, ինչպէս ամեն տեղ:

Միապետութեան կործանումով Պը-
ոնաթարթ մէջ ձեռք բերուած էր մա-
մուլի ազատութիւնը: Նաթուլէն որ-
չափ ալ չըմանալիս ըլլաւ իր բնթաց-
քին մէջ, մամուլը կրնար ինքն ոչ կա-
սեցնել զինքը իր ճամբուն վրայ, զորէ
կը գեղաբարձէր, իր ուշադրութեան
չվերաբերաւ այս:

Ժամանակին պաշտօնական թերթը
կողով «Մոնիթօր»-ին սկսաւ անձնապէս
աշխատակցել որումն և իր հաշուին
համեմատ գրելով վարել հանրային կար-
ծիքը:

(Շարունակելի)

—)o(—

ԽԾԲԾՈՂՆԵՐՈՒՆ

Իրաւունքի մէջ հրատարակած
«Բանութեան տակ» խորագրով փա-
մանակակից հայ կեանքէ տունու-
ած պատկերիս մասին, Պուլիարու-
հայ մամուլին մէջ, և անկէջ գորս
ազգային մէկ երկու շրջանակի մէջ
քանի մը նկատողութիւններ յայտ-
նուեցան որոց գեթադարաւ ա-
տենին չկրցայ պատասխանել անձ.
նակուն զբաղումներու պատճառ-
աւ: Կամքէ անկախ այդ իմ յա-
պտուած չարամիտ մը ալլանդակ
ենթադրութեան կրնար մղուի, եւ
ևս այդ պարագան քաջապէս նը-
կատի առած, չը նախընտրէ որ զը-
ծած պատկերիս դէմ ելած առար-
կութիւններուն ազդուուն և անհա-
րաւոր առաջին անկարելի իսկ ճը-
ղիլ գեթուար չէ, ազատ վարկեա-
նէ մը օգուտելով պիտի փութաւ
պէտք եղած բացատրութիւնը տալ
անարգար խճճողներու յսկիչ
մուրէն ազատելու համար գործս
զոր համահասութեամբ միայն իրաւ-
ունքի ընթերցողներուն ներկա-
յացուցի ուսանց ինքնալստհու-
թեան, ուսանց անքննադատելի
երկ մը մէջտեղ նետած ըլլալու
յուսկնութիւնը տաժելու:

Ինծի դէմ հանուած առարկա-
թիւնները զիստուր երկու կէտի
կը բաժնուէին. Ա. Ֆոլհանէնստ-
դարի դէպքը երբէք գոյութիւն
ունեցած է. Բ. Հաճի Գալուստ
Արխանանի անունը և արարքը
պէտք էր հրապարակել:

Առաջին առարկութեան դէմ
պատասխանս շատ հակիրճ պիտի
ըլլայ: Ուշադիր ընթերցող մը ե-
թէ պարզ հայացք մը նետելու
ըլլայ, նեղութիւն չպիտի կրէ տես-
նալու համար որ, անիկայ վիպա-
կան գոյն կը կրէ: Վէպ մը ուրի-
րական պատկերներ ալ մեծ տեղ
մը կը զբաւեն. մարդ շատ պար-
զամիտ ըլլալու է այսքան տար-
րական ճամբարութիւն մը չլինալ
ըմբռնելու համար. և մենք ո՛ր
և ե՛րբ մեր գործին մէջ ըսած ենք
որ իրական կեանքէ առնուած է
մեր գծած պատկերը: Եւ միթէ
անոր համեմատ արժէքը կը նսե-
մանայ ինքն անիկա իրական կեան-
քէ առնուած չէ:

Ճիշդ է որ Հաճի Գալուստ Սը-
խանանի կեանքի մէկ մասը ջա-
նացած ենք մասնաւոր ընել զը-
լուսի մը մէջ: Ու ալ ճիշդ է որ
Արխանանի թրքական գնդանի մը
խորը կը հիւսնէ: Բայց ևնթադրել
որ իր մասին ըրած նկատողութիւն-
ները անոր վիճակը ալ տեղի դառ-
նացնելու իրենց կէտ նպատակի է
ունեցած լի մենք այդ ամօթով
մարմալէն բռնուած անարգարտեա-
լի հակասութեան մը մէջ ինկած
ենք, այդ աններելի կալ ճատեաւ-
թիւն և անհաշիւ խճճած միայն
կը համարենք:

Թէ Օսմանեան կառավարութիւ-
նը Արխանանի մեղմ աւելի կը

զական խորհրդայն ընտրությունները
ցուցված 23ին կատարուելով, հե-
տեւեալ ազգայինները ընտրուած
են:

Տիար

- » Թաղաւոր Մհեր Ներսիսեան
- » Խաչիկ Մանասեան
- » Կարապետ Յարութեան
- » Ներսէս Մէլիքեան
- » Յակոբ Վ. Փափագեան

— Հինգշաբթի գիշեր տեղի ու-
նեցաւ, տեղւոյս Ազգ. վարժարա-
նի ի նպաստ «Գաթիկոսին Հովսեփ-
գի» թատերական ներկայացումը:
Սրահը գրեթէ լեցուն էր ընտրեալ
բազմութեամբ մը, ուր կը աես-
նուէին Տ. Տ. կառավարիչը, բա-
ղաւորացիները ընտանեօք, պուլկար,
յոյն և հրեայ վաճառականներ:

Ներկայացումը կը տրուէր «Վե-
սելո» հայ թատերախմբին կող-
մէ: Տիկին Գնար Գաթիկոսեան
և Տ. Պապանեան Եթէպոսթի գե-
րերը յաջողութեամբ կատարեցին:
Միայն այս վերջնային սա դիտու-
ղութիւնը ունինք ընելու թէ՛ ա-
ւելի լաւ իւրացուցած պիտի ըլ-
լոր այդ ամենազարմար գերը,
եթէ շանար իր յոյժերուն և դող-
դոջներուն սահման մը որոշիչ ու
նախնայ ի հարկին գործածել: Հան-
րիի դերը կատարող Տ. Լ. Շա-
քարեան, Բաւական կրցաւ իր գե-
րին տէրը ըլլալ: միայն վերջին
մասին մէջ, հանդէպ իր անհա-
ւատարիմ կնիք, չի յաջողցաւ
նախանձութեամբ սպառնալից պատշաճ
արտայայտութիւնները ընել և շեշ-
տեր դնել իր միօրինակ առգա-
նութեան մէջ:

Ներկայացման հասոյթը մօտ
500 ֆրանք կը հաշուի:

— Հինգշաբթի օր բուսական
թուով ազգայիններ յունական
չոգենաւ Պօլիս մեկնեցան: Վա-
ղը պիտի մեկնի աւելի մեծ բազ-
մութիւն մը:

— Սուլթանի լուսանկարչագետ
Ապտուլլահեան վիշէն և տղան
Ապտուլլահեան Ներսէս, իսլամա-
կան կրօնն բնորոշելով, հայրը
Ապտուլլահ Շիրքի իսկ տղան
Ապտուլլահ Զիյա կոչուած են:

Ապտուլլահեանները Պօլսոյ մէջ
խիստ ծանօթ հայ հռովմէական
ընտանիք մըն են:

Տեղւոյս առաջնակարգ հայ վա-
ճառականներէն բնիկ Զմիւռնիա-
ցի Տիար Պօլսո փափագեան, ժա-
մանակէ մը ի վեր զինք տառա-
պիցնող սրտի հիւանդութենէն
յողթահարուած, իր մահկանա-
ցուն կնքեց 55 տմեայ հասակին
մէջ, անդամանելի սուգի մէջ
թողով իր կինն ու հինգ տնչա-
փահաս զաւակները:

Հանգուցիլոյն մարմինը ե-
կեղեցի փոխադրուած է. յաջոր-
կաւորութեան տխուր հանգիստը
պիտի կատարուի այսօր ժամը
2 րն:

Կը լսենք որ, սգակիր տիկինը
ու բարեկամը կը յայտարարեն
թէ՛ հանգուցեալին ծաղկեփունջ
նուիրել ուզողներ այդ նպատակաւ
տրուելիք դրամը յատկացնեն աղ-
քատ գաղթական ազգայինոց ճա-
նապարհածախսի:

ՄԻԻԹԵՆԵՎՎԻՅԷ

Բէթէրսպուրկտան վերլուիչ
պիւր թէկէկրաֆոն պէյանընա նա-
զարէն. Ռուսիա թագմինաթը հար-
պիյէ պապիյէսինին պիւր ան էվէլ
էօտէնմէսի իշիւն Պապը Աւիյէ
քաթթի վէ սօն օլարագ պիւր միւ-
րաճաւթտա պուլունմուշ տըր:

— Ռուսիան ճէնուպ թարաֆ-
լարընտա զայէթ միւսհիշ սու-
րէթտէ հիւքմֆերմա օլուն քըթ-
լըգտան տօլայը, բէք չօգ էօլէն
լէր վար իմիշ:

— Գրպըզտան Սրաւպուշ կա-
զէթասընա եազըլտըզընա կէօրէ:
Նիքօսիա էհալիսինտէն պիւրի:
Կիճէ վազթը պիւրիին շէհրին
ճէպհանէսինի թուլունշտուրմաթ
իւզրէ օլտուղունու կէօրէքթիւ:
Ֆէնկ իլէ անը թէլէֆ իտէր: Հիւ-
քիւմէթ էօլտիւրիլէն առէմին ճի:
նայէթէ Նիյէթի օլտուղունու թաս-
տիգ իթտիկտէն սօնրա. քաթթի
էվէլ եալընըլ ուֆագ պիւր ճէ-
զայի նազաթիէ հիւքմ իթմիշ, վէ
սօնրատա շէհրի պէօլիւք պիւր
թէհիլէքտէն գուրթարմըլ օլտու-
ղու իշիւն Նիշան վէրմիշ տիւր:

— «Կազէթ տը թիւրքիստան» ըն-
պէյանընա նազարէն Բուս հիւքիւ-
մէթի Բուս Էրքեանը հարպ տա-
յիւրէսինին թահթը հիւսայէսինտէ
վէ նէզարէթինտէ օլարագ Զուֆ-
լլտան պաշլալարագ թէպըրի:
Համատան, իսպահան, Կիւման վէ
Պէնտէր-Ապպասա գառար պիւր
շըմէնտըֆէր խաթթընըն եալըլ-
մասընա գարարաշտըրմագտա տըր:
Պու խաթթա թէհէրանտա այլը
պիւր խաթթ իլէ Համատան պաղ-
լանաճագ տըր:

— «Թան» կազէթասընըն եազ-
տըզընա նազարէն: Սուտանտա
ինկիլիզ քօմանտաւը ալթընտա
պուլունան օնտէօրտիւնճի Մըսըր
ալայը ըսեան իթմիշ իմիշ:

— Ռօմատան վերլուիչ պիւր
թէլէկրաֆա նազարէն, շըմալի
իթալիանըն Լօմպարտիա շէհրին:
տէ էհալի հիւքիւմէթէ գարշը
ըսեան իտուպ, ենի գօնուլան պիւր
վէրկիի գապուլ իթմէմիշ տիւր:

— Ալլան ենի մալիւմթարա
նազարէն, Ռուսիանըն Աճէմիստա-
նա վերմիշ օլտուղու քիւլիյէթի
խաթթըրազարա գարշը, Աճէմ
տէօլլէթինին մալիյէսի 75 սէնէ
միւսթէթէ տօլլունտան տօլլունա
Բուսիանըն էլինտէ պուլունաճագ
իմիշ:

SUPPLEMENT

Ֆիլիպէ բոււ մէքթէպի մուալ-
լէմէսի, քէնտինի էօլտիւրմէք ի-
շիւն բէճէրէտէն աշաղա տթմըլ
իսէ տէ. էօլմէյուպ եալընըլ պէլի
զըրըլմըլ օլուպ, իսաթմախանէյէ
նազը օլունմուշ տըր:

Մէպէպի մէճհուլ տըր:
— Սօֆիատա նէշը օլընան «Ն»
վէք» կազէթասընըն պէյանընա
նազարէն մալիյէ նազըրը Մ. Մօն:

Թրէֆ վէ հարպիյէ նազըրը Մի-
րալայ Մ. Բաթրիքօֆ իսթիֆա
իտէճէքլէր իմիշ:

— Պուլկարիստան վէ թիւրքիա
արասընտա շիւտիյէ գառար մու-
ալլէքտէ գալմըլ պիւր թագըմ մէ-
սէլէրին թէպիյէսի իշիւն Պուլ-
կար վէ թիւրք օլարագ միւլթէ-
լիթ պիւր գօմիսթին թէշքիլ օլըն-
մասը Սլթանպօլ Պուլկար Բօլի-
թիգա մասընաթիւրքարը թարա-
ֆընտան Պապը Աւիյէ թէլէֆ օ-
լունմուշ տըր:

— Պուրկալտա իքի գապիթ
պիւրպիւրինէ ըվօլվէր աթմըլ օ
լուպ, պունլարտան պիւրիսի տէր
ազապ էօլմիշ տիւր:

ՄՈՒՀԱՐԷՊԷ

Թրանսպալ մուհարէպէսի հագ-
զընտա կէրէք Էփրա կազէթա-
լարընտան վէ կէրէք թէլէկրաֆ-
լարտան ալընան սօն մալիւմթա-
րանալարէն, Ճէնուպ Աֆրիկատա
ինկիլիզէրին վազիյէթի զայէթ
թէհիլէքլի պիւր հալտէ իմիշ:

— Լօնտրատան վերլուիչ պիւր թէ-
լէկրաֆա նազարէն էլան մուհարէ-
րէտէ պուլունան Լէտիսթիթտէ
իիյէճէք հէլան թիւքէնմէքտէ օ
լուպ, օլտաա պուլունան ինկիլիզ
ասքըլէրի քաթթը իւմիտ իթ-
միշ վէ էհալի տէ արթմըլ տալա-
նամազ պիւր հալէ կէլմիշ տիւր:

— Թէքըր Լօնտրատան Պէրլի-
նէ վէրլուիչ պիւր թէլէկրաֆա նա-
զարէն Ժէնէրալ Ժուպէր իլէրի
հիւրիւմէկէ պաշլալմըլ տըր, վէ
պունըն իւզերինէ Տիւրպանտա զա-
յէթ ալթիւթիւր վէ գօրգու հիւքմ
իթմէքտէ իմիշ:

— Ինկիլիզ հիւքիւմէթի Ճէնու-
պի Աֆրիկա իշիւն եհնիտէն 12
պէօլիւք բիտտէ թէշքիլինէ վէ
պիւր չօգ իսթիհքեամլար եալտըր-
մասընա գարար վերմիշ տիւր:

— Ինկիլթէրա հարպիյէ նա-
զըրը Լօրտ Լանտտաուն, Լօրտ-
լար մէճիսինտէ աթիտէքի պէ-
յանաթտա պուլունմուշ տըր: Եւ-
նի Ճէնուպի Աֆրիկայա շիւտիյէ
գառար կէօնտէրիլէն ասքըլէր-
տէն մատա, ինկիլթէրա 409,000
քիշի տահա սիլահ տթընա ալա-
պիւր քի պունլարտան 130,000
քիշի ինկիլթէրատա իհթիյաթէն
ալը գօնուլուպ, պազը 279,000
քիշիտէն լաղըմ օլտուղու գառար
Թրանսպալա կէօնտէրիլէպիւր:

ԹԻԻՃԱՐԻՅԷ

ՊԱԳԱՆԻՅԷ

Վարնա բիւցալարտա պազգալիյէ
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալ-
թուն ֆրանգ իլէ: Յր. Սնք.
ԳԱՀՎԷ — Ֆիլաթը կիւն պէ կիւն
արթմալտա. պու կիւնքի:
բիւցա 1. 85
Շէֆէր. — (Բէլլէ) քիւր 61
» (Բէսմէ) սանտըր 33.
ԲԻՐԻՆՃ. — Ժարոն չու-
վալը 42.

ԲԻՐԻՆՃ. — Ինկիլ. էլան Յր. Սնք.
մալ կէլմիթը չուվալը 33/34. 50
ԿԱԶ. — Սանտըր 11/11. 50
ՉԷՅԹԻՆ ԵԱՂԸ. — քիւր 1. 20
ԵՆՄԻՇ. — (Եանի գարա
գուրու իւզիւմ — 33

ԲԱՄՈՒԳ

Պու հաֆթա թէքըսը բամուգ մալ-
լէրին ֆիլաթը Մանչէսթըր բիւցալար-
տա արթմըլ վէ էլան արթմալտա ար-
Աթիտէ եազտըզըմըլ իրիւք ֆիլաթա-
րընտա կէօրիւնէն ֆարգ թալիի պէլ
վէ սայիրէ կիւր բամուգտան մամուլ
հէր պիւր մաթատա միւշահէտէ օլընմազ-
տա տըր:

Վարնա մաղազալարընտա իրիւք սա-
թըլարը: Յր. Սնք.

Ինկիլիզ իրիկի Ն. 8/14 10. 30
» » Ն. 18/24 12. 10
ԵՆՄԻՇ իրիկ Ն. 8/14 9. 80
Չիլ բամուգ հօգգա 2. .

ՁԱԽԻՐԷ

ՊՈՒՀԱՐԷ
Վալ. իւպրա 53-57 հէք 9. 50/11. 25 ֆր.
Արապա » 55-56 » 10. 60/12. 20 »
Ֆաւուրիս 100 քիւր 13/20 ֆր.
ԱՐԲԱ
Լիպրա 40-44 հէքթ. 6. 80/9. 40 ֆր.
ՄԸՍԸՐ

Արապա լիպրա 55-58 6. 80/7. 20 ֆր.
Վալօն » » 6. 20/6. 50 »

Վալօն մալմէլէսի ալթուն ֆրանգ-
լէ, վէ արապա մալմէլէսի կիւմիւլ
ֆրանգլէ, հանի նարոլէն 22 ֆր. 40
սանթիմ հիսապը իլէ տիւր:

ՍԱՐՐԱՅԻՅԷ

Պուլկար պանգաւը 22 ֆր. 30 սն.
Կիւմիւլ 20 ֆրանք ալթուն վէրմէք-
տէ օլտըրը իւլիպ, ալթուն տէ 22
ֆր. 20 սանթիմ կիւմիւլ չէ պէմէլ ար-
մաղտա տըր:

Թիւրք լիւսսը 23 ֆր. 30 սանթիմ
ալթունա՝ պէտէլ գապուլ իթմէքտէ
տիւր:

Պազըր վէ Նիքէլ ազէնին կիւ-
միւլ օլան ֆարգը 20 ֆրանքաւ 10/15
սանթիմալ իպարէթ տիւր:

ԱԶԴ

Ազարեա Մկրեան, վաղեմի փակիկա
գործ, պատիւ ունի ծանուցանելու
Գեր. եկեղեցականաց, որ իր ընա-
կութիւն ֆիլիպէ հաստատած ըլլալով
պիտի պատրաստէ ընտիր թաշէ եւ
ասուէ գիւրալիներ, պատարագի զգեստ-
ներ եւ թագեր. յանձնարարութիւնք
հետեւալ հասցէին:

Ազարեա Մկրեան, Ֆիլիպէ:

ԱԶԴ

Քրիի Տարման գիւղէն, վեց
տարիէ ի վեր Ամերիկա գտնուող
Ուարդիա Տէր Բովհանէսեանի ւր
ըլլու գիտցողներէն՝ կը խնդրուի
լուր տուլ Սիւրիտըն Մարտիրոս
Տէր Բովհանէսեանի (Պուլկարիս):

ԻՐԱՆԻՆԻՔ

Կը ծախուի նաւամատոյցի մօտ
Պ. Դանիէլ Մալայանի 111 թիւ
ծխափաճառի նոր բացուած խա-
նութը:

Отговорникъ Н. Драгулевъ
Печ. „Взаимность“ — Варна.